DOI: 10.54503/1829-4324.2024.2-323

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 23.08.24, ուղարկվել է գրախոսման՝ 20.11.24, երաշխավորվել է տպագրության՝ 13.12.24

Ներածություն: Միգրացիոն գործընթացները տնտեսական գործընթացներից անմասն չեն և կարող են նպաստել պետության տնտեսական կյանքի աշխուժացմանը, դրամական փոխանցումների շրջանառության աճին, աշխատանքի շուկայում մրցակցության, մասնագիտական փորձի փոխանակմանը, ներդրումների իրականացմանը և այլն: Վերջին մի քանի տարիների ընթացքում շարունակվում է ոչ միայն հայ բնակչության էմիգրացիան, այլ նաև տեղի է ունենում օտարերկրյա պետություններից բնակչության իմիգրացիա: Նման միգրացիոն հոսքերը կարող են ի հայտ բերել տարբեր սոցիալ-տնտեսական խնդիրներ, որոնց ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է կառավարել միգրացիոն գործընթացները թվայնացման և օրենսդրական գործիքների միջոցով: Հոդվածի **նպատակն** է ներկայացնել ՀՀ սոցիալ–տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշները միգրացիոն հոսքերի փոփոխության համատեքստում: **Խնդիր** է դրվել ուսումնասիրելու դիտարկվող ժամանակահատվածում միգրացիոն գործընթացների ազդեցությունը ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների վրա և բացահայտել այդ գործընթացների թողած հետևանքների վերացման համար անհրաժեշտ միջոցառումների շրջանակը:

Գրականության վերլուծություն: Վերջին տարիներին նկատվում է թե՛ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի աշխատակիցների էմիգրացիա, թե՛ օտարերկրյա աշխատանքային միգրանտների թվաքանակի աճ: Սակայն ՀՀ-ից տեղի է ունենում ոչ միայն ցածր որակավորում, այլ նաև բարձր որակավորում ունեցող աշխատուժի արտահոսք, իսկ դրա փոխարեն երկրում մեծացել է ցածր որակավորում ունեցող օտարերկրյա աշխատանքային իմիգրանտների թվաքանակը: Երկարաժամկետ կտրվածքով այն կարող է առաջացնել լուրջ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ աշխատաշուկայի համար՝ նվազեցնելով աշխատանքի վարձատրության մակարդակը և մեծացնելով գործազրկության մակարդակը՝ հանգեցնելով բնակչության կյանքի որակի անկմանը[1]:

Միգրացիոն գործընթացների թվայնացումն արդեն իսկ իրականացվում է զարգացած երկրներում: Գերմանիայի միգրացիայի և փախստականների դաշնային գրասենյակը միգրանտների և միգրացիոն գործընթացների

[1] Арслангереева, З., Пайтаева, К., Магомаева, Э., Проблема миграции в условиях цифровой экономики: новые вызовы для рынка труда, возможности и приоритеты” // “Прикладные экономические исследования, 2023, № 2, с. 202.

վերահսկման նպատակով օգտագործում է առաջատար թվային տեխնոլոգիաներ, որպեսզի հնարավոր լինի հաստատել մարդկանց ինքնությունը և համակարգել նրանց մասին տվյալները[2]: Թվայնացման գործընթացները իրականացվում են ալգորիթմական գործողությունների օգնությամբ, որոնց կողմից կայացված որոշումներում կարող են թույլ տրվել սխալներ (սխալ հիմունքներով վիզայի մերժում կամ միգրանտի ինքնությունը կասկածյալ ահաբեկչի ինքնության հետ ոչ ճշգրիտ կերպով համապատասխանեցում), քանի որ թվայնացված համակարգերին թույլ է տրվում ինքնուրույն որոշումներ կայացնել: Վերջիններիս կողմից սխալ կայացված որոշումները չեն կարող հիմնավորվել մարդկանց կամ այդ ծրագիրը մշակողների կողմից[3]: Ներկայումս տարբեր ոլորտներում թվայնացման գործընթացների իրականացման համար նկատվում է նաև որակյալ մասնագետների պակաս: Մասնագիտական գրականությունում նշվում է նաև համաշխարհային աշխատաշուկայի հակառակ միտումների առկայության մասին, որոնք չեն հակասում միմյանց՝ աշխատուժի պահանջարկի նվազման հետ միաժամանակ աճում է մրցակցությունը բարձր որակավորում ունեցող մասնագետների միջև[4], ինչն էլ պատճառ է դեպի զարգացած երկրներ աշխատանքային էմիգրացիայի:

Միգրացիոն գործընթացների հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ազդեցությունը մեղմելու նպատակով թվայնացման գործիքների ներդրումը անհրաժեշտություն է, քանի որ միգրանտները առաջացնում են սոցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրներ ընդունող երկրներում, մասնավորապես՝ բնակչության թվի աճ՝ բացասական ազդեցություն ունենալով գործող սոցիալական ինստիտուտների, ապրանքների և ծառայությունների պահանջարկի ավելացման, գյուղական և քաղաքային հատվածների աշխատավարձային կառուցվածքների վատթարացման, տրանսմշակույթի զարգացման, բնիկ ազգաբնակչության սովորույթների և ավանդույթների կորստի, հիվանդությունների և սոցիալական խնդիրների ներդրման վրա[5]:

Մեթոդաբանություն: Հոդվածի տեսամեթոդական հիմնավորման համար իրականացվել է մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկայի

---

[2] Tangermann, J., Documenting and establishing identity in the migration process, Challenges and practices in the German context // “Federal Office for Migration and Refugees”, Nuremberg, 2017, p. 50.

[3] Wickens, C., Complacency and automation bias in the use of imperfect automation, Human Factors // The Journal of the Human Factors and Ergonomics Society, 2015, volume 57, no. 5, pp. 1-3.

[4] Садовая, Е., Цифровая экономика и новая парадигма рынка труда // “Мировая экономика и международные отношения”, 2018, том 62, № 12, с. 42.

[5] Bello Isaias, E., “Social effects of group migration between developing countries” // “International migration”, 1989 June, 27(2), pp. 225-231.

ուսումնասիրություն՝ դիտարկելով սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների, իրականացված դրամական փոխանցումների և միգրացիոն հոսքերի կապը:

Վերլուծություն: Վերջին մի քանի տարիների ընթացքում մեր երկրում աշխուժացել են շինարարության, ծառայությունների և կապի ոլորտները: Այս ոլորտների գերակշիռ մասը կենտրոնացված է Երևան քաղաքում և դրան հարակից շրջաններում: 2024թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ Երևանում ապրում է ՀՀ բնակչության շուրջ 37%-ը (1 127 հազար մարդ[6]), իսկ ծառայությունների ոլորտի շրջանառության ծավալը 2022թ.-ին Երևան քաղաքում կազմել է երկրի ընդհանուր ծավալի շուրջ 86.1%-ը (2 278 465.1 միլիոն դրամ[7]): Տնտեսության վերոնշյալ ոլորտների աշխուժացման շնորհիվ տեղի ունեցավ աշխատուժի պահանջարկի աճ: Շինարարության ոլորտի աշխատակիցների պահանջարկը որոշ չափով բավարարվեց նախկինում ՌԴ արտագնա աշխատանքի մեկնող մեր հայրենակիցների շնորհիվ, իսկ ներկայումս այդ պահանջարկը բավարարվում է նաև օտարերկրյա իմիգրանտների հաշվին: Օտարերկրյա իմիգրանտները ներկայումս մեծամասամբ աշխատում են որպես առաքիչներ և բանվորներ, ինչը թե՛ շինարարության, թե՛ ծառայությունների ոլորտներում սկզբնական շրջանում հանգեցրեց վարձատրության մակարդակի նվազեցման: Այս պարագայում, ինչպես մյուս երկրներում[8], հայ բնակչությունը ևս ստիպված եղավ աշխատել ցածր վարձատրությամբ կամ դիմել արտագնա աշխատանքի: Իրականում ՀՀ եկող աշխատանքային իմիգրանտները ունեն կրթվածության և մասնագիտական որակավորման ցածր մակարդակ, որը երկրի համար աշխատանքային կապիտալի տեսանկյունից ներդրում չի կարող համարվել: Բնակչության էմիգրացիան հիմնականում ունի աշխատանքային բնույթ, բայց քիչ չեն նաև երկիրը մշտապես լքող բնակչության թվաքանակը: Բացի այդ առկա է տարածքային անհամաչափ զարգացման և աշխատանքի հասնելու հեռավորության հետ կապված խնդիրներ: Այս ամենի արդյունքում այն մարդիկ, ովքեր նախկինում մեկնում էին արտագնա աշխատանքի (գերակշիռ մասը ՀՀ մարզերից), ներկայումս նրանց զգալի մասը կրկին շարունակում է մեկնել արտագնա աշխատանքի, քանի որ բարձր վարձատրվող աշխատատեղերը գտնվում են մայրաքաղաքում և դրան հարակից շրջաններում, որտեղ բարձրացել է վարձակալվող և վաճառքի ենթակա բնակարանների գները՝ կապված օտարերկրյա իմիգրանտների թվաքանակի մեծացման և այլ գործընթացների հետ: Դեռևս խորհրդային տարիներին հանրապետության տարաբնակեցման

---

[6] Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2024 թվականի ապրիլի 1-ի դրությամբ, էջ 4:

[7] ՀՀ ՎԿ, «Տարեգիրք», «Առևտուր և այլ ծառայություններ», 2023, էջ 442:

[8] Целищева, З., Проблемы и тенденции развития миграционных процессов населения в условиях глобализирующегося мира: культурологический аспект, Обсерватория культуры, 2016, 13(6), с. 661.

համակարգում միգրացիայի աճի առավել բարձր ցուցանիշներով աչքի էին ընկնում Երևանի անմիջական ազդեցության գոտում գտնվող վերամշակող արդյունաբերության կենտրոնները (Հրազդան, Չարենցավան, Աբովյան, Բյուրեղավան, Նոր Հաճն)[9]: Ուստի տնտեսական օգուտներ են ստանում Երևան քաղաքում և դրա հարակից շրջաններում ապրող բնակչությունը:

Արտերկրից մեր հայրենակիցների կողմից իրականացվող դրամական փոխանցումները կարևոր նշանակություն ունեն միգրացիոն հոսքերի նկարագրման տեսանկյունից ոչ միայն դրամական փոխանցումների ծավալների, այլ նաև մարդկանց նախընտրելի էմիգրացիոն ուղղությունների՝ աշխատանքի, ուսման, մշտական բնակություն հաստատելու և այլ առումներով:

Աղյուսակ 1

ՀՀ բանկերի միջոցով արտերկրից ֆիզիկական անձանց անունով ստացված դրամական փոխանցումները ըստ երկրների տեսակարար կշիռների[10]

	ՌԴ (%)	ԱՄՆ (%)	Շվեյցարիա (%)	Գերմանիա (%)	Մեծ Բրիտանիա (%)	Ֆրանսիա (%)	Այլ երկրներ(%)	Ընդամենը (միլիոն դրամ)
2013	75.02	6.65	1.91	1.11	1.2	0.9	13.21	942 877
2014	73.12	7.39	2.03	1.63	1.23	1.02	13.58	881 102
2015	61.81	10.89	4.16	2.21	1.39	1.3	18.24	780 117
2016	58.45	11.53	3.68	3.43	1.53	1.98	19.4	735 616
2017	60.61	10.44	3.8	2.2	1.73	1.5	19.72	847 137
2018	58.81	12.55	3.05	2.32	1.36	2.73	19.18	862 394
2019	53.88	14.35	3.33	2.13	1.77	1.81	22.73	939 943
2020	44.75	24.95	3.47	2.85	2	2.44	19.54	902 409
2021	41.01	27.52	2.48	3.22	1.95	2.69	21.13	1 058 232
2022	68.63	13.26	1.87	1.53	1.2	1.18	12.33	2 193 554
2023	69.28	11.64	2.48	1.8	1.34	0.94	12.52	2 235 942

Աղյուսակ 1-ում ներկայացված են այն երկրները, որոնցից առավել մեծ ծավալի դրամական ներհոսքեր են տեղի ունեցել ֆիզիկական անձանց անունով, որի ընդհանուր ծավալը 2014թ.-ից սկսած նվազել է ՌԴ-ի նկատմամբ տնտեսական սահմանափակումների կիրառման, դրամի և մյուս արժույթների նկատմամբ ռուբլու արժեզրկմամբ, իսկ 2020թ.-ին այդ փոխարժեքը գրեթե հասել է 2013թ.-ի մակարդակին: 2020թ.-ի կորոնավիրուսի համավարակն էլ դանդաղեցրեց

[9] Մանասյան, Հ., «ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության հիմնահարցերը» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #3-4 (199-200), Երևան, 2017թ., էջ 98:

[10] Հաշվարկների իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԲ կողմից հրատարակված «ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ–ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումներ ըստ երկրների (նոր)» տվյալները:

այդ ներհոսքերի աճը: Իրականացված ուսումնասիրությունները փաստում են, որ 2004-2015թթ.-ի ընթացքում ՌԴ և ՀՀ աշխատավարձերի տարբերությունների 100 դոլլարով աճի հետևանքով արտագաղթողների թիվը ավելացել 647-ով, որոնց հաշվին դրամական փոխանցումների ծավալը ՌԴ-ում հայ էմիգրանտների կողմից աճել է 3,3 միլիոն ԱՄՆ դոլլարով, իսկ ՀՀ ազգային եկամուտը աճել է մոտավորապես 3,2 միլիոն ԱՄՆ դոլլարով[11]: Պատերազմի հետևանքով աճեց ռուս իմիգրանտների ներհոսքը, հետևաբար՝ աճեցին դրամական փոխանցումների ծավալները, բայց տեսակարար կշիռը 2023թ.-ին 2013թ.-ի համեմատ մնացել է նույնը, իսկ ԱՄՆ-ից դրամական փոխանցումների ծավալի տեսակարար կշիռը աճել է: Մյուս երկրներից ստացված դրամական ներհոսքերի ընդհանուր փոխանցումներում ունեցած տեսակարար կշիռները էական փոփոխությունների չեն ենթարկվել:

Աղյուսակ 2

ՀՀ բանկերի միջոցով արտերկիր ֆիզիկական անձանց կողմից իրականացված դրամական փոխանցումները ըստ երկրների տեսակարար կշիռների[12]

	ՌԴ (%)	ԱՄԷ (%)	ԱՄՆ (%)	Մեծ Բրիտանիա (%)	Շվեյցարիա (%)	Գերմանիա (%)	Վրաստան (%)	Չինաստան (%)	Այլ երկրներ (%)	Ընդամենը (միլիոն դրամ)
2013	27.6	5.67	15.72	2.56	1.18	5.58	2.77	10.09	28.83	348 896
2014	28.02	4.81	16.66	2.26	2.13	4.73	3.48	9.09	28.82	376 894
2015	37.63	5.53	13.1	1.92	0.98	4.23	3.3	7.63	25.68	363 931
2016	40.83	2.8	10.26	1.72	2.87	2.91	1.92	6.92	29.77	392 534
2017	38	2.16	19.59	1.88	2.79	2.91	2.16	6.53	23.98	477 666
2018	39.7	1.99	16.07	1.35	4.51	4.11	4.37	4.84	23.06	574 008
2019	29.35	1.66	18.9	1.25	6.01	2.84	12.67	4.06	23.26	697 906
2020	36.21	1.72	12.87	2.04	12.47	4.69	2.92	4.24	22.84	621 566
2021	32.81	3.49	15.45	2.35	11.36	2.65	3.1	6.36	22.43	615 379
2022	17.75	10.47	12.71	10.72	11.31	4.24	5.52	3.45	23.83	1 103 805
2023	15.82	14.14	11.51	7.18	5.83	3.1	3.08	2.12	37.22	1 587 163

Ֆիզիկական անձանց անունով տեղի ունեցած ընդհանուր դրամական փոխանցումների ծավալում 2023թ.-ին 2013թ.-ի համեմատ նվազել են դեպի ՌԴ, ԱՄՆ, Գերմանիա և Չինաստան փոխանցումների տեսակարար կշիռները, բայց

[11] Բաղդասարյան, Վ., Խառատյան Ա., «Էկզոգեն գործոնների ազդեցությունը ՀՀ միգրանտների դրամական փոխանցումների վրա» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, # 1-2 (197-198), Երևան, 2017թ., էջ 60:

[12] Հաշվարկների իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԲ կողմից հրատարակված «ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ–ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումներ ըստ երկրների (նոր)» տվյալները:

աճ են գրանցել դեպի ԱՄԷ, Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա, Վրաստան և այլ երկրներ դրամական փոխանցումների տեսակարար կշիռները (տե՛ս աղյուսակ 2):

Ֆիզիկական անձանց անունով ստացված և նրանց կողմից իրականացված դրամական փոխանցումները վերջին մի քանի տարիների ընթացքում աճել են՝ պայմանավորված աշխատանքային, կրթական, այլ երկիր մշտական բնակություն հաստատելու նպատակով մեկնողների և ժամանողների կողմից իրականացվող միգրացիոն, գործարար կապերի աշխուժացման ու այլ գործընթացներով: Տարբեր երկրների հետ դրամական փոխանցումների ծավալի աճը խոսում է միգրացիոն հոսքերի և՛ դրական, և՛ բացասական ազդեցության մասին: Դրական ազդեցությունը կարող է փաստել հայ աշխատանքային էմիգրանտների թվաքանակի և վարձատրության մակարդակի բարձրացման մասին, իսկ բացասական ազդեցությունը մշտապես մեկնող հայ բնակչության թվաքանակի աճի մասին, ովքեր դրամական փոխանցումների միջոցով կարող են ոչ միայն իրենց դրամական միջոցները դուրս հանել երկրից, այլ նաև որոշակի գումարներ փոխանցել ՀՀ-ում բնակվող իրենց հարազատներին: Միգրացիոն ծառայության կողմից իրականացված հարցումների համաձայն 2023թ.-ի հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում երկրից հիմնականում մեկնում են վարձու աշխատողները (53.5%), ինքնազբաղվածները (19.8%), գործատուները (4.3%), գործազուրկները (12%) և ուսանողները/սովորողները (10.4%): Սակայն ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով և հայ-հնդկական հարաբերությունների խորացման արդյունքում նկատվեց ակտիվ աշխատանքային ռեսուրսների ներհոսք: Ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում ներգաղթեցին ռուս գործարարներ, ծրագրավորողներ և այլ ոլորտի աշխատակիցներ, որոնց սահմանհատումների դրական տարբերությունը 2022թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 42 176 մարդ (մուտք՝ 786 684 մարդ, ելք՝ 744 508 մարդ) 2021թ.-ի նույն ժամանակահատվածի 16 120 մարդու համեմատ (մուտք՝ 495 646 մարդ, ելք՝ 479 526 մարդ)[13]: 2022թ.-ի նույն ժամանակահատվածի ընթացքում ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմել են 12 628 ՌԴ և 4 744 այլ երկրների քաղաքացիներ[14]: Ըստ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հայտարարության 2022-2023թթ.-ի ընթացքում երկրում գրանցվել է 7 328 ձեռնարկություն և ԱՁ, որոնց շնորհիվ ՀՀ ՏՏ ոլորտում գրանցվեց ավելի քան 75%-ով աճ՝ հասնելով մոտ 295 միլիարդ դրամի, բայց, միևնույն ժամանակ, Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (UATE) մոտավոր գնահատականով 2023թ.-ի ընթացքում մոտ 50%-ով կրճատվեցին ռուս ծրագրավորողների և ընկերությունների թիվը: Քաղաքական իրավիճակի, այլ երկրներում առկա բարենպաստ տնտեսական հնարավորությունների հետևանքով առկա է թե՛ տնտեսական, թե՛ օտարերկրյա ներդրումների

[13] Աղբյուրը՝ Միգրացիոն ծառայություն (իրականացված հարցման շրջանակներում):
[14] Աղբյուրը՝ ՀՀ ոստիկանություն (իրականացված հարցման շրջանակներում):

արտահոսք: ՀՀ ՊԵԿ-ի տվյալներով՝ վարձու՝ պայմանագրային հիմունքներով ՌԴ քաղաքացի հանդիսացող աշխատակիցները 2022թ.-ին 12 464 էին, իսկ 2023թ.-ին նրանց թիվը շուրջ 2500–ով նվազել է՝ կազմելով 9 912, նվազել է նաև ռուսների կողմից հիմնված ձեռնարկությունների (2 355-ից հասնելով 946-ի) և ԱՁ-ների թիվը (4 961-ից հասնելով 3 857-ի): Մասնագիտական գրականությունում նշվում է, որ միգրացիոն գործընթացները առաջ են բերում երկրի աշխատաշուկայում առկա թվային տնտեսության ոլորտի աշխատակիցների էմիգրացիոն հոսքերի մարտահրավերներ՝ կապված երկրի ներսում նրանց պահպանելու անհրաժեշտության և աշխատաշուկայի կայունությունը պահպանելու հետ[15]: Մեր երկրի ներսում այդպիսի կադրերի պահպանումը ունի կարևոր նշանակություն, քանի որ նրանք երկարաժամկետ կտրվածքով հանդիսանում են պետության զարգացման հենասյուներից մեկը: ՀՀ-ում 2018թ.-ից 15-74 տարեկան մշտական բնակչության գործազուրկների թիվը կազմել է 245,4 հազար մարդ, իսկ 2022թ.-ին՝ 176,6 հազար մարդ[16]: 2023թ. դեկտեմբերին գործազուրկների թիվը կազմել է ՀՀ-ում աշխատանք փնտրողների 71.6%-ը[17]:

Ըստ գծապատկեր 1-ի դիտարկվող ժամանակահատվածում աշխատուժի առաջարկը մի քանի տասնապատիկ անգամ գերազանցում է աշխատուժի պահանջարկը, ինչն էլ իր հերթին նպաստում է գործազրկության բարձր և աշխատուժի գների ցածր մակարդակների առկայությանը: Սակայն, մյուս կողմից, հայ բնակչության մոտ չկա հետաքրքրվածության բարձր մակարդակ և անհրաժեշտ որակավորում շինարարության, ծառայությունների, կապի և տնտեսության այլ ոլորտներում աշխատելու համար տարբեր պատճառներով պայմանավորված: Օտարերկրյա էժան աշխատուժի ներհոսքը այս հիմնախնդիրները կարող է ավելի խորացնել և նպաստել ՀՀ-ից ոչ միայն աշխատանքային էմիգրանտների, այլ նաև երկիրը մշտապես լքող բնակչության թվաքանակի աճին, քանի որ ստացված վարձատրության մակարդակը կարող է չբավարարել բնակչության նորմալ կենսամակարդակի ապահովմանը:

---

[15] Арслангереева, З., Пайтаева, К., Магомаева, Э., Проблема миграции в условиях цифровой экономики: новые вызовы для рынка труда, возможности и приоритеты// Прикладные экономические исследования, 2023, № 2, с. 204.

[16] ՀՀ ԱՎԾ, «Տարեգիրք», «Աշխատանքի շուկա», 2023, էջ 85:

[17] Հաշվարկը իրականացվել է հեղինակի կողմից: ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին», «Զբաղվածություն», էջ 87:



Գծապատկեր 1. Աշխատուժի առաջարկի և պահանջարկի փոփոխությունը 2011-2022թթ.-ի ընթացքում (մարդ)[18]

Գծապատկեր 2-ում ներկայացված Ջինիի գործակիցը և աղքատության մակարդակը ևս մեկ անգամ փաստում են երկրում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների մասին: Ջինիի գործակցի ամենացածր մակարդակը եղել է 2022թ.-ին՝ 35.2, իսկ աղքատության մակարդակը 2018թ.՝ 23.5%: ՀՀ քաղաքացիների սահմանհատումների մնացորդը 2019-2020թթ.-ի ընթացքում աճել է՝ ցույց տալով, որ արտերկիր մեկնող էմիգրանտների թվաքանակը նվազել է: Վերջինս պայմանավորված է եղել համավարակի հետևանքով տարբեր երկրների կողմից կիրառվող սահմանափակումներով, որի պատճառով 2021թ.-ին գրանցվել է 73 571 մարդու էմիգրացիա, իսկ 2022թ.-ին՝ 27 941 մարդ: Մինչև 2019-2020թթ. եկամուտների անհավասարաչափ բաշխվածության ցուցանիշի և աղքատության մակարդակի նվազմանը զուգընթաց հայ աշխատանքային էմիգրանտների թվաքանակը նույնպես նվազել է, իսկ 2021թ.-ից սկսած նրանց թվաքանակը նորից մեծացել է: 2022թ.-ից սկսած աղքատության մակարդակի և Ջինիի գործակցի նվազման հետ միասին նվազել է նաև ՀՀ քաղաքացիների էմիգրացիան, ինչը պայմանավորված է եղել տնտեսության մի շարք ճյուղերում աշխատատեղերի քանակի մեծացմամբ:

[18] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ օգտագործելով ՀՀ ԱՎԾ, «Տարեգիրք», «Աշխատանքի շուկա»-ի 2011-2022թթ.-ի տվյալներ:



Գծապատկեր 2. Ջինիի գործակիցը, աղքատության մակարդակը և սահմանհատումների մնացորդը 2015-2022թթ.-ի ընթացքում[19]

Չնայած այն հանգամանքին, որ դիտարկվող ժամանակահատվածում միջին ամսական աշխատավարձը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն աճել են, այնուամենայնիվ, այս ցուցանիշների փոքր ի շատե բարելավումը չի նպաստել ՀՀ քաղաքացիների էմիգրացիոն ծավալների նվազմանը (տե՛ս գծապատկեր 3):

Մեր կարծիքով երկրում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները նպաստում են ոչ միայն ՀՀ քաղաքացիների էմիգրացիային, այլ նաև օտարերկրյա էժան աշխատուժի ներհոսքին: Պատճառը այն է, որ որոշ ոլորտների աշխատավարձը չի բավարարում հայ բնակչությանը, ուստի նրանք մեկնում են արտագնա աշխատանքի, իսկ նման հանգամանքները գրավում են օտարերկրյա էժան աշխատուժին, որն էլ, գրավելով երկրի աշխատանքային շուկան, հետագայում կարող է ստեղծել լրացուցիչ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ:

[19] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից: Օգտագործված տվյալների աղբյուրները՝ ՀՀ ԱՎԾ, «Տարեգիրք», «Կենսամակարդակ» (2015-2021թթ.), Համաշխարհային բանկի կայքէջ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության կայքէջ:



Գծապատկեր 3. Միջին ամսական աշխատավարձը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն և 2015-2022 թթ.-ի ընթացքում[20]

Իհարկե երկրում սոցիալ–տնտեսական վիճակը շատ դանդաղ տեմպերով է բարելավվում, սակայն ՀՀ քաղաքացիների էմիգրացիոն ծավալների վրա ազդում են նաև արտերկրում առկա բարեկամական կապերը, վարձատրության բարձր մակարդակը, ցածր որակավորում պահանջող զանազան աշխատանքների առկայությունը, որակյալ կրթության լայն հնարավորությունները, կյանքի բարձր որակը և այլ գործոններ: Ուստի տեղի ունեցող թե՛ էմիգրացիոն, թե՛ իմիգրացիոն գործընթացները սերտորեն միահյուսված են ՀՀ–ում առկա սոցիալ–տնտեսական և սոցիալ–ժողովրդագրական առկա իրավիճակի հետ: ՀՀ քաղաքացիները կարողանում են արտերկրում առկա հայկական սփյուռքի շնորհիվ մեկնել արտերկիր աշխատանքի և մշտական բնակություն հաստատելու նպատակով, քանի որ այնտեղ ապագայի հետ կապված հնարավորությունները ավելի մեծ են, իսկ ներգաղթած օտարերկյա իմիգրանտների համար ՀՀ-ն է հանդիսանում նպատակահարմար ուղղություն աշխատանքի և մշտական բնակության համար, քան իրենց երկրները:

Գծապատկերներ 2-ում և 3-ում ներկայացված տվյալները փաստում են, որ հայ բնակչությունը շարունակում է դիմել աշխատանքային և մշտական

[20] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից: Օգտագործված տվյալների աղբյուրները՝ ՀՀ ԱՎԾ, «Տարեգիրք», «Կենսամակարդակ» և «Ազգային հաշիվների համակարգ» (2015-2021թթ.) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության կայքէջ:

էմիգրացիայի, չնայած որ առկա է ոչ այնքան էական սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում, որը կարող է ապագայում ավելի խորանալ օտարերկրյա աշխատանքային էմիգրանտների թվաքանակի աճով պայմանավորված: Ուստի երկրի մասշտաբով անհրաժեշտ է իրականացնել խորը ուսումնասիրություններ բնակչության սոցիալական խնդիրների վերաբերյալ և կիրառել պետություն-մասնավոր հատվածի համագործակցությամբ գործիքակազմ հայ աշխատանքային էմիգրանտներին ՀՀ աշխատանքային շուկայում վերաինտեգրելու նպատակով, և հետո միայն փորձել ներգրավել սահմանափակ թվով օտարերկրյա աշխատանքային էմիգրանտների:

2024թ.-ին ՀՀ վարչապետին ներկայացված «Միգրացիայի և քաղաքացիության ծառայության 2023թ. գործունեության հաշվետվությունում» նշվում են աշխատանքի հիմքով կացության կարգավիճակի տրամադրման թվայնացված գործընթացի նմանությամբ այլ հիմքերով կացության կարգավիճակների տրամադրման գործընթացների թվայնացնմանն ուղղված աշխատանքների մասին, որի համար գործարկվել է https://workpermit.am/ հարթակը: Մշակվել է նաև «Քաղաքացիություն չունեցող անձանց (ՔՉԱ) մասին» օրենքի նախագիծ, որը կկանոնակարգի նաև ՔՉԱ-ի կարգավիճակի որոշման ընթացակարգը[21]: Պետության համար մշակված է եղել նաև «Միգրացիայի քաղաքականության ռազմավարություն» հինգ տարի ժամանակահատվածներով, որտեղ նշվում է նաև հայ աշխատանքային էմիգրանտների վերադարձին աջակցող մեխանիզմների ստեղծման և նրանց վերաինտերգրման, Հայաստան ժամանող փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության, նրանց ինտեգրման գործընթացների իրականացումը: Սակայն վերոնշյալ հիմնախնդիրների մասով կարևոր առաջընթաց չի գրանցվել, քանի որ ՀՀ-ից ՌԴ և այլ երկրներ դեռևս մեկնում են աշխատանքային էմիգրանտներ, իսկ այդ ամենի հետ մեկտեղ թույլ է տրվում նաև այլ երկրներից օտարերկրյա աշխատանքային իմիգրանտների ներհոսքը: Միգրացիոն ծառայության կողմից միայն հրապարակվում են սահմանհատումների վերաբերյալ տեղեկատվություն, որում չի նշվում թե ինչ ազգության և թվաքանակի իմիգրանտներ են ժամանել, չի նշվում նաև նրանց ժամանման նպատակը՝ ուսում, աշխատանք, զբոսաշրջություն և այլն, գոյություն չունեն նաև նրանց մասնագիտական որակավորման վերաբերյալ տվյալներ, շատ կարևոր է նաև թե ինչ տարիքային խմբի և սեռի իմիգրանտներ են ժամանում: Վերջին հաշվով երկիրը իր վրա կարող է վերցնել օտարերկրյա աշխատուժի ներգրավումը այն պարագայում, երբ լուծված են հայ ազգաբնակչության կենսապահովման հետ կապված խնդիրները:

Գիտական նորույթ: ՀՀ միգրացիոն հոսքերի և դրամական փոխանցումների ծավալների փոփոխությունների վերլուծության հիման վրա բացահայտվել է դրանց ազդեցությունը երկրում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների վրա, որոնց կարգավորման համար ներկայումս էլ ավելի է

[21] Տեղեկատվության աղբյուրը՝ https://migration.am/news/555:

մեծանում պետության միջամտության և վերահսկողության դերը:

Եզրակացություն: Միգրացիոն գործընթացների ազդեցությունը երկրի տնտեսության վրա ներկայումս մեղմելու համար առաջարկում ենք իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. ՀՀ եկող իմիգրանտները կրոնական, կրթական և ապրելակերպի ավանդույթներով ու սովորույթներով տարբերվում են հայ բնակչությունից՝ ի տարբերություն նախկին ԱՊՀ որոշ երկրներից ժամանող իմիգրանտների: Ուստի անհրաժեշտ է իրականացնել միգրացիոն գործընթացների խորը վերահսկողություն, և, ինչպես նշվում է մասնագիտական գրականությունում, անհրաժեշտ է թվային տեխնոլոգիաների և տեղեկատվական բազաների ներդրում պետական կառավարման և հանրային ծառայությունների մատուցման ոլորտներում[22] միգրացիոն գործընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու նպատակով:

2. Իմիգրանտների թվաքանակի աճը բացասական ազդեցություն է ունենում նաև աշխատանքային շուկայի վրա, ուստի անհրաժեշտ է զսպող պետական միջոցառումներ իրականացնել օտարերկրյա էժան աշխատուժի ներհոսքը կարգավորելու նպատակով, քանի որ այդ ամենը կարող է ապագայում էլ ավելի մեծացնել մեր հայրենակիցների արտագնա աշխատանքի մեկնելու ծավալները և խորացնել սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները՝ հաշվի առնելով, որ երկրում առկա ներկայիս տնտեսական ակտիվությունը կարող է ունենալ ժամանակավոր բնույթ: Մեր կարծիքով անհրաժեշտ է նախ աշխատանքային շուկան համալրել հայ ազգաբնակչության հաշվին:

3. Հայերը, սփռված լինելով աշխարհի տարբեր երկրներում, ստեղծել են ամուր սփյուռք, որը նախկինում թե՛ ֆինանսական օգնություններով, թե՛ ներդրումներով օգնում էր իր հայրենակիցներին: Սակայն ՀՀ հասարակության մեջ առկա սոցիալական անարդարությունը, իրավահավասարության բացակայությունը, բյուրոկրատական համակարգի թերությունները թուլացրեցին այդ կապը: Անհրաժեշտ է ակտիվ քայլեր իրականացնել սփյուռքի հետ կապերը ամրապնդելու և վստահելի փոխհարաբերություններ կառուցելու ուղղությամբ, որը կարող է խթանել երկրում առաջատար տեխնոլոգիաների ներդրմանը և ֆինանսական ներդրումների իրականացմանը:

ՀՀ-ն, գտնվելով միջազգային միգրացիոն գործընթացների խաչմերուկում, պետք է առաջին հերթին կարգավորի միգրացիոն գործընթացների ազդեցությունը տնտեսության վրա, այնուհետև դառնա կապող օղակ միջազգային հարթակում: Մեր կարծիքով չպետք է տնտեսական շահերը վեր դասել ազգային շահերից կամ կարճաժամկետ խնդիրների լուծման նպատակով ստեղծել երկարաժամկետ խնդիրներ, քանի որ երկիրն ունի այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատանքային և մշտական էմիգրացիան, հայ-ադրբեջանական պատերազմի

[22] Акрамов, Ш., Акрамов, Ф., Миграционная сфера в период цифровой трансформации государственных услуг и внедрения суперсервисов// ЦИТИСЭ, 2022, № 3, с. 80.

ունեցած հետևանքները և դրա չհանգուցալուծված վերջաբանը, բնակչության սոցիալական խնդիրները ու ոչ բավարար վարձատրության մակարդակը, երկրի անհամաչափ զարգացումը և այլն: Նման խիստ միջոցառումների իրականացումը մեր կողմից դիտարկվում է որպես պետական անվտանգությանը և տնտեսական անկախությանը միտված քայլեր, քանի որ մեր երկրի նման փոքր պետությունների համար անհրաժեշտ է ունենալ տնտեսական, քաղաքական և այլ ոլորտների անկախությանը նպաստող հնարավորություններ և ռեսուրսներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղբյուրը՝ ՀՀ ոստիկանություն (իրականացված հարցման շրջանակներում)
2. Աղբյուրը՝ ՀՀ Միգրացիոն պետական ծառայություն (իրականացված հարցման շրջանակներում)
3. Բաղդասարյան, Վ., Խառատյան, Ա., Էկզոգեն գործոնների ազդեցությունը ՀՀ միգրանտների դրամական փոխանցումների վրա // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, # 1-2 (197-198), Երևան, 2017թ., էջեր 57-60
4. Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2024 թվականի ապրիլի 1-ի դրությամբ, 9 էջ: Տվյալների աղբյուրը՝ https://armstat.am/file/article/population_01_04_24.pdf
5. ՀՀ ՎԿ, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին», «Զբաղվածություն», էջ 87: Տվյալների աղբյուրը՝ https://armstat.am/file/article/sv_12_23a_141.pdf
6. ՀՀ ՎԿ, «Տարեգիրք», «Աշխատանքի շուկա», 2021-2022թթ.-ի տվյալներ:
7. ՀՀ ՎԿ, «Տարեգիրք», «Առևտուր և այլ ծառայություններ», 2023թ., էջ 442: Տվյալների աղբյուրը՝ https://www.armstat.am/file/doc/99541123.pdf
8. ՀՀ ՎԿ, «Տարեգիրք», «Կենսամակարդակ» (2015-2021թթ.), «Ազգային հաշիվների համակարգ» (2015-2021թթ.), Համաշխարհային բանկի կայքէջ (https://data.worldbank.org/indicator/SI.POV.GINI?locations=AM) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության կայքէջ (https://migration.am/content/pdf/%D5%8D%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.2022.arm.pdf)
9. ՀՀ ԿԲ կողմից հրատարակված «ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ–ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումներ ըստ երկրների (նոր)» տվյալները: Աղբյուրը՝ https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

1. Մանասյան, Հ., «ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության հիմնահարցերը» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #3-4 (199-200), Երևան, 2017թ., էջեր 96-99
2. Տեղեկատվության աղբյուրը՝ https://migration.am/news/555
3. Акрамов, Ш., Акрамов, Ф., Миграционная сфера в период цифровой трансформации государственных услуг и внедрения суперсервисов // ЦИТИСЭ, 2022, № 3, сс. 70-82.
4. Арслангереева, З., Пайтаева, К., Магомаева, Э., Проблема миграции в условиях цифровой экономики: новые вызовы для рынка труда, возможности и приоритеты // “Прикладные экономические исследования”, 2023, № 2, сс. 200-205.
5. Садовая, Е., Цифровая экономика и новая парадигма рынка труда// Мировая экономика и международные отношения, 2018, том 62, № 12, с с. 35–45.
6. Целищева, З., Проблемы и тенденции развития миграционных процессов населения в условиях глобализирующегося мира: культурологический аспект, Обсерватория культуры, 2016, 13(6), сс. 660-664.
7. E. Bello Isaias, “Social effects of group migration between developing countries” // “International migration”, 1989 June, 27(2), pp. 225-231.
8. Tangermann, J., Documenting and establishing identity in the migration process, Challenges and practices in the German context // “Federal Office for Migration and Refugees”, Nuremberg, 2017, 64 p. Electronic source: https://www.bamf.de/SharedDocs/Anlagen/EN/EMN/Studien/wp76-emn-identitaetssicherung-feststellung.pdf?__blob=publicationFile&v=16.
9. Wickens, C., Complacency and automation bias in the use of imperfect automation, Human Factors // The Journal of the Human Factors and Ergonomics Society, 2015, volume 57, no. 5, pp. 1-12. Electronic source: https://www.researchgate.net/publication/275101423_Complacency_and_Automation_Bias_in_the_Use_of_Imperfect_Automation.

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Համառոտագիր

Համաշխարհային միգրացիոն գործընթացների արդյունքում տեղի է ունենում կրթական, ֆինանսական, մշակութային և այլ ոլորտներում փորձի փոխանակություն: Ներկայումս ավելի մեծ ծավալներով են նախկին գաղութացված պետություններից մարդիկ մեկնում դեպի զարգացած և նոր զարգացող երկրներ, այսինքն՝ կարելի է ասել, որ տեղի է ունենում զարգացած երկրների «միգրացիոն գաղութացում», որը կարող է սպառնալ ոչ միայն տվյալ

երկրի աշխատանքային շուկայի անվտանգությանը, այլ նաև այդ երկրի էթնիկ բնակչության ազգային ինքնությանը: Հայ բնակչության արտագնա աշխատանքի կամ մշտական բնակության նպատակով մեկնելու պատճառները կապված են առկա սոցիալ-տնտեսական խնդիրների հետ: Այս միտումը երբեք չի կորցրել իր **արդիականությունը**, որն էլ իր հերթին ծնում է երկրում ժողովրդագրության հետ կապված խնդիրներ:

Հոդվածի **նպատակն** է ներկայացնել ՀՀ սոցիալ–տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշները միգրացիոն հոսքերի փոփոխության համատեքստում: Հոդվածի հիմնական **խնդիրն** է հանդիսացել ուսումնասիրել դիտարկվող ժամանակահատվածում միգրացիոն գործընթացների ազդեցությունը միգրացիոն գործընթացների ազդեցությունը ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների և բացահայտել այդ գործընթացների թողած հետևանքների վերացման համար անհրաժեշտ միջոցառումների շրջանակը:

Հոդվածի **գիտական նորույթը** ներկայացված է ՀՀ միգրացիոն հոսքերի և դրամական փոխանցումների ծավալների փոփոխությունների վերլուծության միջոցով, որի արդյունքում բացահայտվել է դրանց ազդեցությունը երկրում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների վրա, որոնց կարգավորման համար ներկայումս էլ ավելի է մեծանում պետության միջամտության և վերահսկողության դերը:

Բանալի բառեր: Միգրացիա, դրամական փոխանցում, աշխատանքային շուկա, աղքատության մակարդակ, ՀՀ քաղաքացիների սահմանհատումների մնացորդ, աշխատուժի առաջարկ, աշխատուժի պահանջարկ, մեկ շնչի հաշվով ՀՆԱ:

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЙ ИМИДЖ РА В КОНТЕКСТЕ МИГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ

ГЕВОРГ МАРТИРОСЯН

Аннотация

В результате глобальных миграционных процессов происходит обмен опытом в образовательной, финансовой, культурной и других сферах. В настоящее время выходцы из бывших колониальных государств в больших объемах переезжают в развитые и новые развивающиеся страны, то есть можно говорить о «миграционной колонизации» развитых стран, которая может угрожать не только безопасности рынка труда данной страны, но и этой страны к национальной принадлежности этнического населения. Причины выезда армянского населения на работу за границу или на постоянное место жительства связаны с существующими социально-экономическими проблемами. Эта тенденция никогда

не теряет своей **актуальности**, что в свою очередь создает проблемы, связанные с демографией в стране.

Цель статьи представить показатели, характеризующие социально-экономическое положение РА в контексте изменения миграционных потоков. Основной **задачей** статьи было изучить влияние миграционных процессов на показатели, характеризующие социально-экономическое состояние РА в рассматриваемый период, и определить комплекс мер, необходимых для ликвидации последствий этих процессов, а использованные **методы** помогли достичь поставленных в статье целей.

Научная новизна статьи представлена посредством анализа изменения объемов миграционных потоков и денежных переводов в РА, в результате чего выявлено их влияние на существующие в стране социально-экономические проблемы, для регулирования которых роль государственного вмешательства и контроля в настоящее время еще больше возрастает.

Ключевые слова. Миграция, денежные переводы, рынок труда, уровень бедности, баланс пересечения границ гражданами РА, предложение рабочей силы, спрос на рабочую силу, ВВП на душу населения.

THE SOCIO-ECONOMIC PICTURE OF ARMENIA IN THE SCOPE OF MIGRATION PROCESSES

GEVORG MARTIROSYAN

Abstract

As a result of the global migration processes, there is an exchange of experiences in education, finances, culture, etc. Currently, people from former colonial states are moving to developed and newly developing countries in larger volumes, that is, there is a "migratory colonization" of developed countries, which can threaten not only the security of the labor market of a given country but also the national identity of the ethnic population. The emigration reasons of the Armenians are related to existing socio-economic problems. This trend has never lost its **relevance** for Armenia, and in turn, creates demographic problems in the country.

The **purpose** of the article is to explore the indicators characterizing the socio-economic situation of Armenia in the context of changes in migration flows. The **objectives** of the article were to study the impact of migration processes on indicators characterizing the socio-economic situation of Armenia during the observed period and to identify the scope of measures necessary to eliminate the negative consequences of these processes.

The scientific novelty of the article is presented through an analysis of changes in the migration flows and remittances in Armenia, as a result of which their impact on the country's socio-economic problems was revealed. For the regulation of those problems, the role of state intervention and regulation is currently increasing even more.

Keywords. Migration, money transfer, labor market, poverty level, the balance of border crossings of RA citizens, labor supply, labor demand, GDP per capita.